ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/47

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ի 21.11.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ (այսուհետ՝ նաև Ա/Ձ) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 21.11.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Հանձնաժողովի նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող մասնակիրց է ճանաչվել «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն:

«ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն հայտով՝ որպես հայտի ապահովում ներկայացրել է 12.10.2017թ. տրված բանկային երաշխիքը, ինչի վրա բացակայում է մասնակցի կողմից տվյալ փաստաթուղթը հաստատված լինելու փաստը ապացուցող էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Հանձնաժողովի 08.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

www.gnumner.am պաշտոնական կայքում 10.11.2017թ. ժամը 12:27-ից մինչև 20.11.2017թ. ժամը 23:00 հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:»:

Որպես Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցներ, Ա/Ձ-ն նշել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև որ՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման

քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի համաձայն՝ ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն

դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն հայտով՝ որպես հայտի ապահովում ներկայացրել է 12.10.2017թ. տրված բանկային երաշխիքը, ինչի վրա բացակայում է մասնակցի կողմից տվյալ փաստաթուղթը հաստատված լինելու փաստը ապացուցող էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:»:

«Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ն բողոքով խնդրել է.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգ գնահատող հանձնաժողովին արգելել գնման ընթացակարգի մասով կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ՝ այն է կնքել պայմանագիր:

Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի՝

- 20.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ և 4.1-րդ կետերով կայացված «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը

Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան և 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցց ճանաչելու մասին որոշումները,

- 08.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված՝ «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ին ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու և նույն արձանագրության 1.3-րդ կետով նախատեսված՝ www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակված, պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Խորհրդի նիստերին մասնակցում էր անհատ ձեռներեց Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.11.2017թ. թիվ ԴՎԱ/4264 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հայտի ապահովման չափը և միակողմանի հաստատված հայտարարության ձևերը, այն է տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, 34-րդ հոդվածով սահմանվում է «հայտերի գնահատման» կարգը, իսկ «գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է հայտերի մերժման հիմքերը, իսկ 41-րդ կետով՝ հայտի ապահովումի, կամ գնային առաջարկի շտկման պահանջի հիմքերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման կարգի».

32-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ.

Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Իսկ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի նախահաշվային գինը 116.000.000 ՀՀ դրամ է, որը էապես գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, հետևաբար «մասնակիցը» հայտի ապահովումը պետք է

ներկայացներ կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերությամբ՝

Եթե հայտի ապահովումը ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղերած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացվում է դրա բնօրինակը:

32-րդ կետի 12-րդ ենթակետով՝

Գնման ընթացակարգին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստատթղթից արտատպված տարբերակով:

Տվյալ դեպքում «բանկային երաշխիքը» հաստատվում է բանկի կողմից, այլ ոչ թե մասնակցի:

43-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությաբ նախատեսված փաստատթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչներ Յուրի Եսայանը և Մուրադ Նալբանդյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ի 21.11.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.11.2017թ. թիվ ԴՎԱ/4264 գրությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման

հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը և 08.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ին 12.10.2017թ. տրամադրված բանկային երաշխիքը, Պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Բուլդոզերի» գնման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 20.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2.3 կետով արձանագրվել է, որ «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):
- 4.1 կետով Հանձնաժողովը որոշում է ընդունել Ընթացակարգի գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 08.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով որոշում է ընդունվել «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ին որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Բողոքի քննության նպատակով 24.11.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ:

Պատվիրատուի ներկայացուցիչը ևս պնդեց 25.11.2017թ. թիվ ԴՎԱ/4264 գրությամբ Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը և հայտնեց, որ մասնակցի կողմից ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը կից գրությամբ, ինչպես նաև նշեց, որ «բանկային երաշխիք»-ը հաստատվում է բանկի կողմից, այլ ոչ թե մասնակցի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում եթե հայտի ապահովումը ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղերած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացվում է դրա բնօրինակը:

• 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները՝ հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակով:

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի

միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությաբ նախատեսված փաստատթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 8.19 կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ մասնակից:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով որպես հայտի ապահովում ներկայացված «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից «ՍՊԵՑՄԱՇ»

ՍՊԸ-ին 12.10.2017թ. տրամադրված բանկային երաշխիքի բնօրինակը «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ի կողմից կից գրությամբ ներկայացվել է Պատվիրատուին:

Խորհուրդը գտնում է, որ «Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ի կողմիցներկայացված բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման, քանի որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը չի հանդիսանում ռեզիդենտ մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթուղթ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռաֆայել Մկրտչյան» Ա/Ձ-ի կողմից 21.11.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ